ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Медицинский Центр "Норк-Мараш"
Армения, г. Ереван, Норк,
ул. А. Арменакяна 108/4
Тел: (+37410) 65 09 71; 65 09 61
Факс: (+37410) 65 38 69
или 65 05 60

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 108/4
Հեռ. (+37410) 65 09 71; 65 09 61
Ֆաքս (+374 10) 65 38 69
կամ 65 05 60

"Nork-Marash" Medical Center
Armenakian str. 108/4
Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 65 38 69
Fax: (+37410) 65 38 69, 65 05 60
E-mail: heart@nmmc.am

25.05.2022թ.

N 08-133

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն
պարոն Ս. Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Խաչպար>> ՍՊԸ-ի միջև 24.01.2022թ կնքվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15 ծածկագրով պայմանագիրը: Նշված պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների, ինչպես նաև պայմանագրի 8.15 կետի պայմանների <<Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:>>

Ֆինանսական միջոցների հատկացման և վճարման պայմանի վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցումը նշված պայմանագրի մասով Ձեզ ներկայացվել են 26.04.2022թ-ին, ուստի Դուք կրում էիք պարտավորություն մինչև 18.05.2022թ. ներառյալ Պատվիրատուին ներկայացնել կնքված համաձայնագիրը, ինչը չեք կատարել:

Միաժամանակ, մինչև համաձայնագիր կնքվելը Ձեր կողմից իրականացվել են որոշ մատակարարումներ պայմանագրերի շրջանակներում, որոնք ընդունվել են Պատվիրատուի կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի Պատվիրատուն համարում է այդ մասով Պայմանագիրը Ձեր կողմից փաստացի կատարված:

Հիմք ընդունել վերոգրյալները նշված պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է Պատվիրատուի կողմից պայմանագրերի չկատարված մասով՝ 180180 (հարյուր ութսունմեկ հազար հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով, որի հաշվարկը ներկայացվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն Ձեր ընկերությունից կգանձվի պայմանագրի և որակավորման ապահովումները պայմանագրի լուծված մասին համապատասխան:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Վաճառողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծվելու մասին պատշաճ ծանուցված սույն ծանուցումը Գնորդի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

	Պայմանագրով նախատեսված		Մատակարարված		Չմատակարարված	
Մատակարարը, Պայմանագրի համարը, ապրանքների անվանումները	քանակը	գումարը	քանակը	գումարը	քանակը	գումարը
Խաչպար ՍՊԸ, ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-15						
էլեկտրոդ էՍԳ-ի մանկական	8 000	291 200	3 050	111 020	4 950	180 180

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ

Կատարող՝
գնումների բաժին
հեռ. 010-650560